Արձանագրություն N 2

<< ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2023/3>> **ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի**

ք. Երևան

25 սեպտեմբերի, 2023թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ — Ա. Առուշանյան

Հանձնաժողովի անդամներ

/ԳՊ/ԳԱ/՝ — Կ. Եսայան

/ԳՊ/ԳԱ/՝ — Ա. Քամալյան

/ԳՊ/ԲԱ/՝ — Գ. Հարությունյան

/ԳՊ/ԲԱ/՝ — Ն. Պետրոսյան

Քարտուղար՝ /ԳՊ/Միմ/ — Վ. Ղազարյան

1. <<ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2023/3>> ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, 2023թ.-ի սեպտեմբերի 25-ին, ժամը 10:00-ին:

2. Հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

N	Մասնակցի անվանումը	Տվյալները
1	«Բիոնկոդ» ՍՊԸ	Հակոբ Հակոբյան 3, հեռ. +37460755888

3. Հայտի բացման արդյունքում արձանագրվեց, որ ընթացակարգի մասնակցի կողմից ուղարկված հայտը Համակարգում կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, սակայն ներկայացված հայտում առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

- Դիմում -հայտարարության (Հավելված 1) մեջ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղման փոխարեն նշվել է «Բիոնկոդ» ՍՊԸ կազմակերպության պաշտոնական կայքէջի հղումը:

- Մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքում (Հավելված 3) բացակայում են ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

- Համաձայն Հրավերի 2.4 կետի 1-ին ենթակետի նախկինում կատարված առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: «Բիոնկոդ» ՍՊԸ կողմից ներկայացված պայմանագիրը չի համապատասխանում վերոնշյալ պահանջին, ինչպես նաև ներկայացված պայմանագիրը միակողմանի է հաստատված և ներկայացված չէ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

4. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

5. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

6. Մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն է.

ՀՀ դրամ

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Գնման առարկայի գնման ընդհանուր գինը	Մասնակցի անվանումը և գնային առաջարկը *	
					«Բիոնկոդ» ՍՊԸ	
					Գնային առաջարկը	
					առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/	ներառյալ ԱԱՀ
1	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ / Վեբ ծրագրավորման դասընթաց ՋԱՎԱՍԿՐԻՊՏ, ԷԿՄԱՍԿՐԻՊՏ6 ՊԼՅՈՒՍ (JavaScript, ECMAScript6+)/	դրամ	1	240000	210000	-

(*-եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում,ապա լրացվում է միայն "Առանց ԱԱՀ" սյունակը)

7. Հանձնաժողովն որոշեց հրավերով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և «Բիոնկոդ» ՍՊԸ -ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

8. Հանձնաժողովն որոշեց հաջորդ նիստը նշանակել 2023 թվականի սեպտեմբերի 27-ին, ժամը 12:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեով, 613 աշխատասենյակում:

<<ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2023/3>> **ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

27 սեպտեմբերի 2023թ.

Ժամը՝ 12:00

9. Հանձնաժողովն արձանագրեց, որ «Բիոնկոդ» ՍՊԸ-ի հայտում արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկվել են, ուստի հանձնաժողովն որոշեց «Բիոնկոդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

10. Ներկայացված հայտի հիման վրա <<ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2023/3>> ծածկագրով գնահատող հանձնաժողովն որոշեց ընտրված մասնակից ճանաչել «Բիոնկոդ» ՍՊԸ -ին:

11. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն անգործության ժամկետ կիրառելի չէ:

12. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գնահատող հանձնաժողովի նախագահ
/ԳՊ/ԳԱՊ/՝ _____ Ա. Առուշանյան

Հանձնաժողովի անդամներ
/ԳՊ/ԳԱ/՝ _____ Կ. Եսայան

/ԳՊ/ԳԱ/՝ _____ Ա. Քամալյան

/ԳՊ/ԲԱ/՝ _____ Գ. Հարությունյան

/ԳՊ/ԲԱ/՝ _____ Ն. Պետրոսյան

Քարտուղար՝ /ԳՊ/Միմ/ _____ Կ. Ղազարյան